ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 31 » 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000006

Ձեռնարկողը՝ ***«ՏԻ-ՍԼԱ» ՍՊԸ***
Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Ի. Օրու փող. 2, բն.3

Գործունեությունը՝ ***Անգեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տարածքում 2019-2021 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000006

«31» 01 2020թ.

Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տարածքում 2019-2021 թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Տի-Սլա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզի Անգեղակոթ բնակավայր

Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքերևակման 3.07հա տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրություն:

Հետախուզվող Անգեղի անդեզիտաբազալտների երևակումը գտնվում է Սյունիքի մարզի Անգեղակոթ գյուղի վարչական տարածքում՝ գյուղից 3.5 կմ դեպի հյուսիս-արևելք:

Մոտակա բնակավայրերը Անգեղակոթ, Սպանդարյան և Շաքի գյուղերն են:

Նկարագրական մաս. Անգեղի անդեզիտաբազալտների երևակման ապարների հետախուզում՝ որպես երեսապատման նյութ՝ "Блоки из горных пород для производства облицовочных орхитектурно-строительных мемориальных и других изделий" 9479-98 ԳՈՍ_ի տեխնիկական պահանջների, իսկ թափոնները որպես շինարարական ավազի, խճի հումք (ՀՍՏ ԳՕՍ 8267-95) և ավազ շինարարական աշխատանքների համար 8736-2014 ՀՍՏ ԳՕՍ–երի տեխնիկական պահանջներին:

Ուսումնասիրվող երևակման տարածքի ծայրակետային կոորդինատները՝ ARM WGS-84 համակարգով.

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

X_1 - 4386130	Y_1 - 8581138
X_2 - 4386050	Y_2 - 8581208
X_3 - 4386024	Y_3 - 8581245
X_4 - 4385969	Y_4 - 8581239
X_5 - 4385922	Y_5 - 8581397
X_6 - 4385813	Y_6 - 8581376
X_7 - 4385754	Y_7 - 8581341
X_8 - 4385909	Y_8 - 8581204
X_9 - 4386042	Y_9 - 8581177
X_{10} - 4386044	Y_{10} - 8581187
X_{11} – 4386127	Y_{11} - 8581112

Նախագծով նախատեսվում է 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ, հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում, մաքրվածքների անցում, փաստագրում, նմուշարկում, փորձնական հանույթ ռադիոմետրական և ինժեներա-հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 5-20 մետր խորության 4 հորատանցքեր՝ 50 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%:

Նախատեսվում է 1-ին խմբի 4 հորատանցքերի հորատում ՈՒԳԲ -50 տիպի ինքնագնաց հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 4 տեղակայում և տեղահանում:

Երևակման սահմաններում նախատեսվում է անցնել երեք մաքրվածքներ՝ 30 գծ.մ. ընդհանուր ծավալով:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, մաքրվածքները և բնական մերկացումներն ու բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների՝

- հորատահանուկի փաստագրում - 50.0մ
- մաքրվածքների անցում, փաստագրում և նմուշառում- 30.0մ
- բնական մերկացումների փաստագրում և նմուշառում - 40մ
- փորձնական բացահանքի փաստագրում - 30մ

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն – հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով: Աշխատանքները կիրականացվեն СРП 6801 ռադիոմետրական չափիչ սարքի միջոցով:

Բազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի. ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 18 նմուշներով (հորատահանուկ 9 նմուշ, մենակաքար 9 նմուշ): Նմուշներից 10-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 8-ը՝ կրճատ: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հոկուկների միջոցով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ խճի ուսումնասիրման համար: Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ նախատեսվում են կատարել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Անալիտիկ» ՓԲԸ մասնագիտացված լաբորատորիայում:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 30x4x2.5=300մ³ ծավալով, որից 100մ³ դելյուվիալ առաջացումներից ու հողմնահարված ապարներից /այդ թվում հողաբուսաշերտը 15խմ/, և 200մ³ չհողմնահարված, թարմ ապարներից: Վերջիններից կկատարվի փորձնական հանույթ՝ պիտանի բլոկների ելքի որոշման համար: Փորձնական հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 200մ³:

Անգեղի անդեզիտաբազալտների երևակման տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության «այլ» գործառնական նշանակության հողերով:

Երևակման տարածքում համատարած հողային ծածկույթ չկա, քանի որ երևակման մակերեսների զգալի մասը ներկայացված է անդեզիտաբազալտների բնական մերկացումով: Առանձին հատվածներում առկա հողային ծածկույթը ներկայացված է լեռնային սևահողերով, որոնց հզորությունը հասնում է 0,2-0,4մ:

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների և հորատանցքերի անցման ընթացքում:

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, ինչպես նաև արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները՝ հորատման աշխատանքների իրականացման համար հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում :

Հողերի վերականգնումը կկատարվի աշխատանքների ավարտից հետո: Մաքրվածքների տարածքում նմուշառումից հետո կկատարվի հանված շերտի հետլցնում և փխրեցում: Փորձնական բացահանքի տարածքում ռեկուլտիվացիան կիրականացվի մակաբացման ապարների կիրառմամբ և հողաբուսաշերտով: Հողաբուսաշերտը մաքրվածքների տարածքում վերականգնվում է 0.2մ խորության վրա: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, անմիջապես նմուշարկումից և փաստագրումից հետո: Հողերի հարթեցման, փխրեցման ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար կհատկացվի 100.0 հազ.դրամ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները:

- Նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում՝ հատուկ տարաներով:

- Հորատման թագագլխիկների հավաքում, որպես մետաղական ջարդոն, աշխատանքների ավարտից հետո մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման հանձնելու համար:

-Կենցաղային աղբի հավաքում հատուկ պոլիէթիլենային տոպրակների մեջ, մոտակա աղբահավաք կետեր բեռնատար մեքենայով տեղափոխում:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

-Կեղտաջրերի հավաքումը կկատարվի դաշտային հորատիպ զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, դատարկված փոսը լցվելու է քարերով:

-Հանրային անվտանգությունից ելնելով նախատեսվում է ցանկապատել /մեկուսացնել/ աշխատանքների կատարման տեղամասերը.

-Խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Հողաբուսաշերտը մաքրվածքների տարածքում վերականգնվելու է 0.2մ խորությամբ: Աշխատանքները կատարվելու են ձեռքով, անմիջապես նմուշարկումից և փաստագրումից հետո:

-Ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ հորատման թագիկների հավաքում և հանձնում, դիզելային վառելիքի մնացորդների հանձնում վերամշակման կետեր:

- Աղմուկի մակարդակի վերահսկում, ինչը դիտարկվում է որպես կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունների նվազեցում:

Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է աշխատանքների տեղամաս, ավտոտրանսպորտով՝ Սպանդարյան գյուղից՝ պայմանագրային հիմունքներով:

Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Տի-Սլա» ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ:

–լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Պատճառաբանական մաս. երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CENTER" SNCO

Անգեղակոթ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրակազմման, հաշվի են առնվել ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Տի-Սլա» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Անգեղի անդեզիտաբազալտների հանքերևակման տարածքում 2019-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ Հ. Մեսրոպյան

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS